ԶՎԱՐԹՆՈՑԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Ա. Զվարթնոցի վերականգնման անհրաժեշտությունը կամ նպատակահարմարությունը

Զվարթնոցը հայ ճարտարապետության պատմության մեջ ոչ միայն դարագլուխ նշանավորող հուշարձան է, այլև մեր գրեթե բոլոր հուշարձանների շարքում այն մեկը, որ ի վիճակի է իրենով ներկայացնել մեր շինարարական-ճարտարապետական արվեստի հազարամյա նվաճումները, այլև հավաստել մեր շինարար ժողովրդի ճարտարապետական հանճարը:

Զվարթնոցը նույնպիսի արժեք ունի նաև համընդհանուր ճարտարապետության պատմության անդաստանում, քանի որ իր ժամանակի եզակի երևույթներից մեկը լինելով, մեծ դեր է խաղացել հաջորդ ժամանակաշրջանի ստեղծագործական ներշնչումների ու մղումների գործում, արվեստի ընդհանուր զարգացման առաջընթացի համար:

Էջմիածինը կար, Հռիփսիմեն ու Բագարանը կային, սակայն, ինչպես հաղորդում է Կաղանկատվացին, բյուզանդական Կոստանդ կայսրը չնաշխարհիկ Զվարթնոցի կրկնօրինակն էր ուզում տեսնել իր տերության մայրաքաղաք Կոստանդնուպոլսում, հանրահռչակ ս. Սոֆիա տաճարի դեմ հանդիման:

Զվարթնոցը XI դարի հենց սկզբում Գագիկ թագավորի կողմից կրկնվեց, Անիի Մայր տաճարի առկայությունն անգամ նրա բարի մտադրությունը չկասեցրեց, հիրավի, և այդ՝ ոչ այնքան մղված հավատաբանական որևէ դրդումով, որքան Զվարթնոցի՝ արվեստի այդ գլուխգործոցի աննախադեպ պատկերի (այդ ժամանակ արդեն կործանված) վերականգնման, հավերժացման հավաստի նկատառումով: Գագիկն, անկասկած, գիտակցել է, որ այդ ժամանակներում միայն ինքն է ի վիճակի նման մեծագործության և այն իրականացնում է, ժողովուրդն էլ այն կոչում է նրա անունով՝ Գագկաշեն:

Մեր օրերում ի՞նչ արժեք պիտի ունենային Պանթեոնն ու Պարթենոնը, Կոլիզեյն ու ս. Սոֆիան, եթե նրանց լոկ հատակագծերը պահպանվելիս լինեին, ինչպես այժմ Զվարթնոցում է:

Սրա գիտակցումն է ահա, որ այժմ երկրորդ և, նույնիսկ երրորդ կյանքի են կոչվում ոչ միայն միջնադարյան արժեքավոր հուշարձաններ, այլև XVII-XVIII դարերի այն փայտեղեն հուշարձանները, որոնք փտել, դարձել են մոխրացման ենթակա: Դրանք ամենայն մանրամասնությամբ վերականգնվում են նոր փայտով, նույն տեղում կամ նոր կազմավորվող բաց թանգարաններում:

Ակներև է ու հասկանալի, որ Զվարթնոցի վերականգնման անհրաժեշտությունը սովորական առարկությունից վեր է և երկու կարծիք լինել չի կարող:

Բ. Զվարթնոցի վերականգնման իրավունքը նորմատիվային առումով

Խոսվում և բերվում են տվյալներ, որ իբր կարող են վերականգնվել միայն այն հուշարձաններից լավագույնները, որոնց առկա մնացորդները կազմում են ամբողջականի առնվազն 20 տոկոսը: Մինչ Զվարթնոցում, իբր առկա է 10 տոկոսը միայն, և ուրեմն ենթակա չէ այն վերականգնման:

Բանն այն է, որ հուշարձանի վերականգնման առումով, մնացորդների գնահատումը, պարզ մեխանիկականից՝ քանակականից բացի, պետք է ընդգրկի պահպանվածի որակական կողմը, այսինքն, նրա ամեն մի բեկորի նշանակությունը վերակազմական նախագծի ստեղծման գործում: Օրինակ, ի՞նչ արժեք պիտի ունենար, եթե պահպանվելիս լիներ Զվարթնոցի սովորական շարքային քարերի թեկուզ 80 տոկոսը և ավելին: Ո՛չ մի: Մինչդեռ իրականում, բարեբախտաբար, պահպանվում են քիչ, սակայն կարևոր, հանգուցային դրվագներ բնորոշող բեկորներ, որոնցով հնարավոր է դառնում վերստեղծել տաճարի ամբողջական պատկերը մեծ հավանականությամբ և, նույնիսկ, զգալի մանրամասներով: Ահավասիկ՝ ամենայն ճշգրտությամբ տեղում պահպանվում է տաճարի հատակաձևը: Նույնպիսի հավաստիությամբ ու բոլոր մանրամասներով

վերակազմվում է տաճարի պլաստիկ մշակումը (նաև վերնահարկ տանող սանդուղքները երկու տարբերակով՝ արևելյան ուղղանկյուն շինության ներսում – բաց վիճակում, ինչպես և հոծ միջնապատի մեջ – գաղտնուղու ձևով՝ փակ վիճակում):

Վերնահարկի գոյությունը հաստատվում է մեծ քանակի բոլորակ պատուհանների բեկորների առատությամբ, արտաքին ծավալների տրամաբանական համաչափությամբ և այլ հավաստող հանգամանքներով:

Տաճարի երկրորդ աստիճանը՝ Թորամանյանի վերակազմության ձևերով հաստատվում է ինչպես ճարտարապետական, այնպես էլ կոնստրուկտիվ- կառուցողական հաշվարկային հավաստի վերլուծություններով:

Տաճարի երրորդ աստիճանի՝ գմբեթային մասի հավաստի պատկերը Թորամանյանի վերակազմության ձևով հիմնավորվում է բեկորների բծախնդիր չափագրության տվյալներով:

Ողջ վերոհիշյալի հիմունքով Զվարթնոցի վերականգնման հնարավարությունը ռեալ է և որևէ չափով չի հակասում մնացորդների նորմատիվային-քանակական (տոկոսային) պահանջներին:

Գ. Տաճարի վերականգնման բնույթը տեղի առումով

Առավել կարևոր հարցերից է տաճարի վերականգնման բնույթը, այսինքն՝ <u>նորի</u> և <u>հնի</u> փոխհարաբերությունը: Այս առումով հնարավոր է երեք դեպք. դրանք են՝

ա) Նոր Զվարթնոցը բարձրացնել գոյությունը պահպանած ավերակի տեղում:

բ) Նոր Զվարթնոցը կառուցել նոր տեղում, հնի անմիջական հարևանությամբ:

գ) Նոր Զվարթնոցը կառուցել գոյությունը պահպանած ավերակի վրա՝ առանց խաթարելու պահպանվածը:

<u>Առաջին դեպքը</u> անընդունելի է, աննպատակահարմար: Գոյություն ունեցող ավերակի տեղում կառուցել, նշանակում է ավերակը հիմն ի վեր վերացնել, նրա տեղում նոր հիմքեր կառուցել և նոր հիմքերի վրա տաճար բարձրացնել:

Բանն այն է, որ հնի մնացորդների՝ հիմքերի և որմնախարիսխների վրա նորը բարձրացնելն անհնար է: Ավերակի հնացած մնացորդների, հին եղելության վկաների անաղարտ պահպանության անհրաժեշտությունն անառարկելի է, այն ոչնչացնելը՝ անթույլատրելի:

Երկրորդ դեպքը միանգամայն հնարավոր է, հնի հարևանությամբ ազատ տարածության վրա կփորվեն նոր հիմքեր, կկառուցվի նոր շինություն, նոր տեխնիկայի ազատ գործադրությամբ: Այս դեպքում ձեռնարկը կիրականացվի էժան, արագ, հեշտ, սակայն, ինքնին հասկանալի է, չի ունենա այն արժեքը, որ կունենար հնի վրա կառուցելու դեպքում, հին դրվագների և բեկորների ընդգրկմամբ:

Երրորդ դեպքը նույնպես հնարավոր է և հարուստ դրական կողմերով, սակայն կկառուցվի զգալի դժվարություններով, զգալի թանկացումով և տևական ժամանակով: Այս դեպքը պետք է պատկերացնել հետևյալ կերպ. հնի արտաքին կեղևը թողնվում է անձեռնմխելի, կեղևի ներսում ստեղծվում է նոր, ուժեղ կմախք, որը կունենա ստորգետնյա ապահով հիմք և վերգետնյա ուժեղ գոտի, որի վրա կբարձրանա շենքը, օրգանապես շարունակելով հնից պահպանված դրվագները:

Երեք դեպքերից ռեալ են վերջին երկուսը, ըստ որում, եթե երկրորդ դեպքը նախընտրելի է կառուցման-իրականացման ռեալությամբ, աշխատանքների ռացիոնալ կազմակերպմամբ, հնի՝ ավերակի անաղարտ պահպանությամբ, ապա երրորդ դեպքը նախընտրելի է արդյունքով՝ նույն տեղում, հնից մնացած բեկորների ընդգրկմամբ, հավաստիությամբ:

Դ. Շինության տեղադրման տարբերակներ

Վերոհիշյալ երեք դեպքերից երկրորդը նախընտրելու դեպքում կարելի է առաջարկել շինության տեղադրման մի քանի տարբերակ: Դրանք են.

ա) Նոր Զվարթնոցը կառուցել հին Զվարթնոցից ուղիղ արևելք (տարածությունը կենտրոնների միջև 65 մետր, տես գծ. 1):

բ) Նոր Զվարթնոցը կառուցել հին Զվարթնոցից ուղիղ հյուսիս (տարածությունը կենտրոնների միջև մոտ 65 մետր):

գ) Նոր Զվարթնոցը կառուցել հին Զվարթնոցից ուղիղ հարավ (տարածությունը կենտրոնների միջև մոտ 120 մետր):

Առավել ընդունելի պիտի համարել առաջին երկուսից մեկն ու մեկը:



Գծ. 1 *– Նոր Զվարթնոցի կառուցման տեղի առաջարկ՝ հին Զվարթնոցից արևելք:*

Ե. Կառուցման արժեքը

Շինության ընդհանուր (օդային) ծավալը մոտ 30000 խմ է:

Շինարարության արժեքը՝ մոտ 3000000 ռ. (3 միլիոն ռ.՝ չհաշված վարչատնտեսական ծախսերը և տրանսպորտն ու մեխանիզացիան):

Զ. Շինարարության տևողությունը

Բոլոր դեպքերում՝ 5 տարուց ոչ ավելի:

Ծանոթություն – Որպես համերգասրահ օգտագործելու դեպքում, տարողությունը վերնահարկով կկազմի մոտ 1200 հոգի (1200 քմ):